



ՀԱՆԳԻՍՏ
ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՄԱՇՏՈՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԹԱԶԻՐՅԱՆԻ
(1895—1973)



Սույն թվականի ապրիլի 9-ի երեկոյան, երկարատև հիվանդությունից հետո, 78 տարեկան հասակում, վախճանվեց Մայր Աթոռի միաբան տ. Մաշտոց եպիսկոպոս Թաշիրյանը:

Հանգուցյալ Մաշտոց սրբազանը (սվազանի անունով՝ Դավիթ) ծնվել է 1895 թվականի դեկտեմբերին Կեսարիա նահանգի (Թուրքիա) Կարմիր գյուղում, ծառայողների ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում:

Այնուհետև պատանի Դավիթը 1912—1915 թվականներին սովորել է Կեսարիայի ս. Կարապետ վանքին կից հոգևոր դպրոցում:

Նա 1915—1920 թվականներին կրել է ծանր գրկանքներ և, մի կերպ ազատվելով եղեռնից, բնակություն հաստատել Փարիզում, ուր հետևում է իրավաբանական և պատմագիտական դասընթացների:

Ապա մինչև 1947 թվականը Փարիզում և Լիբանանում աշխատել է որպես հաշվապահ և դատապաշտպան:

1947 թվականին հանգուցյալը ներգաղթել է Հայաստան, բնակություն հաստատել Երեվանում և մինչև 1955 թվականը իր մասնագիտությամբ աշխատել Երևանի տարբեր հիմնարկներում:

1955 թվականին նա գալիս է Մայր Աթոռ և ձեռնադրվում արքեպիսկոպոս: Սույն թվականի հոկտեմբերին ս. Էջմիածնում գումարված ազգային-եկեղեցական ժողովում ընտրվել է Մայր Աթոռի Վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

1956—1960 թվականներին նա եղել է

Մայր Աթոռի միաբանական սեղանատան վարիչը:

1959 թվականի հոկտեմբերին պատրաստել և Վեհափառ Հայրապետին է ներկայացրել վարդապետական իր ավարտաճառը՝ «Ա. Էջմիածինը դարեր շարունակ ժողովրդի հետ և ժողովրդի համար» թեմայով և ստացել վարդապետական աստիճան ու 1960 թվականին ընտրվել Թիրակի թեմի առաջնորդ:

1962 թվականի հոկտեմբերի 14-ին եպիսկոպոս է ձեռնադրվել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի ձեռքով:

Հանգուցյալ սրբազանը Մայր Աթոռում կատարել է բարեխղճորեն իրեն վստահված պարտականությունները, իսկ Թիրակի թեմում ծավալել է թեմական, բարոզական, շինարարական և արդյունավետ աշխատանքներ՝ ի պայծառություն Թիրակի թեմի եկեղեցիների և համայնքների: 1971 թվականի նոյեմբերին տ. Մաշտոց սրբազանը հիվանդության պատճառով հրաժարվում է թեմական իր պաշտոնից և վերադառնում Մայր Աթոռ՝ իր կյանքի վերջին օրերը խաղաղությամբ անցկացնելու այնտեղ:

Տ. Մաշտոց սրբազանը թե՛ Մայր Աթոռում և թե՛ թեմական իր պաշտոնավարության ընթացքում միշտ եղել է հավատավոր, ավանդապահ հոգևորական, իր օրինակելի կենցաղով, համեստությամբ, սիրվել և՛ իր ժողովրդից, և՛ իր շրջապատից՝ արժանա-

նալով նաև Հայոց Հայրապետի բարձր գնահատությամբ:

Հանգուցյալի աճյունը ապրիլի 11-ի երեկոյան դրվում է ս. Գայանե եկեղեցում: Հաջորդ օրը պատարագում է տ. Մուշեղ վրդ. Պետիկյանը, իսկ վերջին օծումը կատարում է Մայր Աթոռի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթրուրյանը և իր դամբանականում խոսում հանգուցյալի ուսանելի, նվիրյալ կյանքի ու գործունեության մասին:

Ապրիլի 12-ին, ժամը 13-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հանգուցյալի թաղման արարողությունը, որից հետո աճյունն ամփոփվում է ս. Գայանե վանքի միաբանական գերեզմանատանը:

Ապրիլի 15-ին, կիրակի օրը, Ծաղկազարդի տոնին, Մայր տաճարում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ տ. Մաշտոց եպս. Թաջիրյանի: Վեհափառ Հայրապետը, արարողությունից առաջ, Իր խոսքի մեջ վեր հանեց հանգուցյալ սրբազանի արժանիքները՝ որպես հավատավոր, կարգապահ ու համեստ հոգևորականի, որը «չիրավասան» ծառայեց Մայր Աթոռ ս. Էջմիածնին, Հայաստանյայց առաքելական եկեղեցուն, մանավանդ Թիրակի թեմում՝ իր առաջնորդության տարիներին:

Հանգիստ նրա ոսկորներին:

